Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19.11.2019թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բարսեղյան
Հանձնաժողովի անդամներ՝ Շ. Իսախանյան
Լ. Սարիբեկյան
Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Կ. Բարսեղյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 05.11.2019թ.

ա) հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ:

բ) ծանուցվել էր յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

1.2 Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 13.11.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ-ի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում բացակայում է հրավերով պահանջվող սպասարկման կենտրոնի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև Հավելված 3.1-ում սխալ է նշվել չափաբաժնի համարը:

1.3 Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 13.11.2019թ. ծանուցվել է <<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում արվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Կ. Բարսեղյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ներքոնշյալ չափաբաժիններում ընտրված մասնակից ճանաչել

չափաբաժին 2 - <<Կարինե Գաբրիելյան>> Ա/Ձ-ին,
չափաբաժիններ 3 և 5 - <<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին

(Կ. Բարսեղյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Բարսեղյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Կ. Բարսեղյան

Անդամ՝ _____ Շ. Իսախանյան

_____ Լ. Սարիբեկյան

_____ Հ. Բաղինյան

_____ Լ. Խալաթովա

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան